



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/118/2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

13 մայիսի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2025 թվականի մայիսի 13-ին քննելով ՀՀ Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության երրորդ կայազորային քննչական բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ Ադասի Իսրայելի Դանիելյանի ընտանիքի անդամ Նելլի Հովհաննեսի Ասոյանի կողմից պաշտոնատար անձի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի վերաբերյալ թիվ ՎԻՎ/118/2025 գործը՝

ՊԱՐԶԵՑ

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով, նույն օրենքի 26.1-րդ և 26.2-րդ հոդվածներով սահմանված կարգով Աղասի Իսրայելի Դանիելյանի վերաբերյալ իրականացված բարեվարքության ուսումնասիրության շրջանակում, ուսումնասիրել է վերջինիս ընտանիքի անդամ Նելլի Հովհաննեսի Ասոյանի գույքային դրությունը, այդ թվում նաև նախկինում ներկայացված հայտարարագրերը: Ուսումնասիրության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ նույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն իրականացնելով հայտարարագրերի վերլուծություն և ստուգում, որի արդյունքում արձանագրել է հետևյալը՝

Կադաստրի կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ 2005 թվականի օգոստոսի 31-ից համատեղ սեփականության իրավունքով Նելլի Ասոյանին է պատկանում Շիրակի մարզ, [REDACTED] հողամասը (1,400քմ.), մինչդեռ նշված հողամասը հայտարարագրված չէ Հայտարարագրում :

1.2 Հանձնաժողովը վերը նշված տվյալի հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի մայիսի 2-ին Նելլի Ասոյանին հասցեագրել է թիվ 01/1755-2025 գրությունը՝ հրավիրելով նշված գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 16:00-ին Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, իսկ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 16:00-ին գործի քննությանը մասնակցելու նպատակով: Նշված գրությունը Նելլի Ասոյանը ստացել է 2025 թվականի մայիսի 5-ին (հիմք՝ Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղարկված պատասխան նամակը):

1.3 2025 թվականի մայիսի 8-ին պատշաճ ծանուցված Նելլի Ասոյանի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 77/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Նելլի Ասոյանի ներկայությամբ 2025 թվականի մայիսի 13-ին,

Ժամը՝ 16:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Նեղի Ասոյանը 2025 թվականի մայիսի 6-ին Հանձնաժողով է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը. «(...) հայրս՝ Հովհաննես Երմոլովի Ասոյանը, ով 2010 թվականի հունիսի 12-ին մահացել է՝ [REDACTED] հանդիսացել և մինչև օրս էլ շարունակում է հանդիսանալ Ձեր կողմից նշված՝ թիվ [REDACTED] կադաստրային ծածկագրով հողամասի սեփականատերը, որի համասեփականատերեր հանդիսացել ենք նաև մայրս՝ Ռուզաննա Ասոյանը, քույրս՝ Նաիրա Ասոյանը, և ես: Հորս մահվանից 6 ամսվա ընթացքում, Արթիկի տարածքային նոտարը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի բացման կարգի, ի թիվս այլ գույքի, որպես ժառանգություն, նոտարական կարգով ցուցակագրել և հայրիկիս ժառանգներին է փոխանցվել 0.39 հա ընդհանուր մակերեսով հողամաս, որը գտնվում է Շիրակի մարզի [REDACTED] անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական [REDACTED] տրված [REDACTED]., նոտարական գործարքը գրանցված է սեղանամատյանում՝ [REDACTED] Հիշյալ հողամասը, միակ հողամասն է եղել, որի համասեփականատեր հանդիսանալու մասին ես տեղեկություն ունեցել եմ, այն էլ 2016 թվականի մայիսի 16-ին վաճառվել է մայրիկիս, քույրիկիս և իմ գրավոր համաձայնությամբ:

Ձեր կողմից ստացված ծանուցման արդյունքում իմ կողմից կատարված հարցումներով պարզվել է, որ Շիրակ մարզի [REDACTED] գտնվող՝ թիվ [REDACTED] կադաստրային ծածկագրով 1,400քմ. հողամասի սեփականատերեր ցայսօր շարունակում ենք հանդիսանալ հայրս, մայրս, քույրս և ես, այնինչ հիշյալ հողամասը, հայրիկիս մահվանից մինչև վեց ամիս բացված նոտարական կարգով կատարված ըստ օրենքի ժառանգության իրավունքով, հայրիկիս սեփականության հանդիսացող գույքերի ցանկում ներառված չի եղել: Ցանկանում եմ նշել, որ օրենքով սահմանված կարգով, ըստ օրենքի ժառանգության իրավունքը տարածվում է մահացած անձին պատկանող շարժական և անշարժ բոլոր անուն

գույքերի վրա, այլ կերպ հիշատակվող գույքի վերաբերյալ գրառում է կատարվում, ինչը նոտարական գործարքում բացակայում է:

Այսինքն. Ձեր կողմից նշված Շիրակի մարզի [REDACTED] գտնվող 1,400քմ. հողամասի համասեփականատեր հանդիսանալու փաստի վերաբերյալ ես տեղեկություն չեմ ունեցել, ավելին՝ շուրջ 20 տարիների ընթացքում, որպես հողամասի համասեփականատեր, երբևէ չեմ ծանուցվել հողամասի գույքահարկի նկատմամբ առաջացած իմ պարտավորությունների վերաբերյալ, ինչով պայմանավորված նշում եմ, որ ես տեղեկացված չեմ եղել այդ հողամասի առկայության վերաբերյալ, ուստի նպատակ չեմ ունեցել այդ հողամասի նկատմամբ իմ համասեփականատեր լինելու իրավունքը թաքցնելու կամ այլ կերպ այն չներկայացնել իմ տարեկան հայտարարգրում»:

Կից ներկայացնում եմ հայրիկիս մահվան վկայականի, ըստ օրենքի ժառանգության մասին վկայագրի, տվյալ հողամասի սեփականության իրավունքի վկայականի, անշարժ գույքի վարճառքի պայմանագրի պատճենները:

Վերը նշված գրավոր պարզաբանմանը նույնաբովանդակ պարզաբանում Նելլի Ասոյանը ներկայացրել է նաև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ժամանակ:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/118/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների վերլուծություն և հաստատված է համարում, որ՝

3.1 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ ՀՀ Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության երրորդ կայազորային քննչական բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ Աղասի Իսրայելի Դանիելյանի ընտանիքի անդամ Նելլի

Հովհաննեսի Ասոյանը հանդիսանում է գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.2 Կադաստրի կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ Նելլի Ասոյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է Շիրակի մարզ, [REDACTED] գտնվող (1,400քմ.) հողամասը, մինչդեռ վերը նշված անշարժ գույքը հայտարարագրված չէ վերջինիս Հայտարարագրի «Բ.1. Անշարժ գույք» բաժնում:

3.3 Նելլի Ասոյանի կողմից Հանձնաժողովին ներկայացված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրում ներառված են հետևյալ գույքերը՝

1. ՀՀ քաղաք Արթիկ, [REDACTED] գտնվող բնակելի տունը և կից տնամերձ հողամասը:
2. Վարելահող՝ 0.39 հա ընդհանուր մակերեսով, որը գտնվում է ՀՀ, Շիրակի մարզ, [REDACTED] հասցեում,
3. ՎԱԶ 21060 մակնիշի ավտոմեքենան:

Շիրակի մարզ, [REDACTED] գտնվող (1,400քմ.) հողամասը նշված վկայագրում ներառված չէ:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համար:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը՝ հողամասը, ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտը, անտառը, բազմամյա տնկին, ստորգետնյա և վերգետնյա շենքը, շինությունը, հողին ամրակայված այլ գույք:

4.3 Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույք հայտարարագրելիս նշվում են անշարժ գույքի տեսակը, գտնվելու վայրի հասցեն, գույքի հաշվառման համարը, մակերեսը, սեփականության տեսակը (անձնական կամ ընդհանուր), ընդհանուր բաժնային սեփականության դեպքում՝ հայտարարատու սեփականատիրոջ բաժինը, համասեփականատիրոջ բաժինը, նրա անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը և նրանց միջև առկա կապի բնույթը, գույքը ձեռք բերելու տարին և եղանակը:

4.4 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները** սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.8 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.9 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.10 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.11 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ

ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, **Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:**

Սույն գործով ՀՀ Քննչական կոմիտեի գինվորական քննչական գլխավոր վարչության երրորդ կայազորային քննչական բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ Աղասի Իսրայելի Դանիելյանի ընտանիքի անդամ Նելլի Հովհաննեսի Ասոյանի Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ որպես հայտարարագրի ներկայացնելու պարտականություն կրող անձ, Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է սխալ կամ ոչ ամբողջական տվյալ, այն է՝ Հայտարարագրի «Բ.1. Անշարժ գույք» բաժնում չի հայտարարագրել է ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող Շիրակի մարզ, [REDACTED] գտնվող 1,400քմ., մակերեսով հողամասը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ: Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Տվյալ դեպքում Հանձնաժողովն արձանագրում է, որ թեև Նելլի Ասոյանը Շիրակի մարզ, [REDACTED]

գտնվող 1,400քմ. մակերեսով հողամասը չհայտարարագրելով խախտել

է Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանք, այդուհանդերձ նկատի ունենալով այն, որ Նեյլի Ասոյանի կողմից ներկայացված պարզաբանումների և դրանք հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ վերջինս տեղյակ չի եղել, որ այդ հողամասը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է իրեն, տվյալ հողամասը ներառված չի եղել հոր մահից հետո բացված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրում, այդ հողամասի սեփականության վկայականը նրան չի տրամադրվել և նա այդ հողամասն երբեք չի օգտագործել, Հանձնաժողովը գտնում է, որ վերջինիս կողմից թույլ տրված խախտումն ունի նվազ նշանակություն

Ամփոփելով վերոգրյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Նեյլի Հովհաննեսի Ասոյանին ազատել վարչական պատասխանատվությունից՝ հայտարարելով բանավոր դիտողություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նեյլի Հովհաննեսի Ասոյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Նեյլի Հովհաննեսի Ասոյանին տրամադրել եռօրյա ժամկետ՝ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ